Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Հակոբ Սիմիդյան, շրջակա միջավայրի նախարար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կանադա (Վանկուվեր), 2023 թվականի օգոստոսի 21-ից 28-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (ԳԷՀ):

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) Յոթերորդ Ասամբլեային և հարակից հանդիպումներին, ներառյալ նախարարական նիստերին:

5. **Քննարկված թեմաները.**
   ԳԷՀ-ի յոթերորդ ասամբլեան համախմբել էր շուրջ 1500 մասնակից ամբողջ աշխարհից՝ ներառյալ բնապահպանական առաջնորդների և կառավարիչների, կառավարությունների, բիզնեսի, գիտական հատվածի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: Ասամբլեայի նստաշրջանի մասնակից 185 երկրների ներկայացուցիչներ վավերացրեցին Կենսաբազմազանության գլոբալ շրջանակային հիմնադրամի ստեղծման հարցը (GBFF): Հիմնադրամը ֆինանսավորում կներգրավի կառավարություններից, նվիրատվություններից և մասնավոր հատվածից:
   Հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև.
   - կենսաբազմազանության գլոբալ շրջանակային հիմնադրամի խորհրդի որոշումների վավերացմանն առնչվող հարցեր,
   - ԳԷՀ-ի հավատարմագրային հիմնադրամի յոթերորդ համալրման վերաբերյալ հաշվետվությունը,
   - ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, կենսաբազմազանության պահպանության, միջազգային ջրերի և օզոնային շերտի պահպանության ծրագրերին ֆինանսական և տեխնիկական աջակցության տրամադրման վերաբերյալ հարցեր:

   Միջոցառման ընթացքում տեղի են ունեցել «Լուծումներ ուղղված առողջ մոլորակին» թեմայով լիագումար նիստեր, որոնք նվիրված էին գլոբալ բնապահպանական դեգրադացիային արձագանքմանը, պատասխանատու, ներառական և փոխակերպելի կառավարմանն ու դեպի կանաչ տնտեսության անցման առաջընթացին: Միջոցառման ընթացքում մասնակցել եմ նաև կլոր սեղանի ձևաչափով անցկացված քննարկումներին, որոնց ընթացքում

անդրադարձել է կատարվել շրջանաձև տնտեսության զրո արտանետումային ցիկլի խրախուսմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության բարձրացման և հարմարվողականության նոր իրողությանը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի յոթերորդ ասամբլեայի շրջանակներում հանդիպել եմ.

- ԳԷՀ-ի Գործադիր տնօրեն և նախագահ Կառլոս Մանուել Ռոդրիգեսի հետ, որի ընթացքում անդրադարձ է եղել.

✓ Հայաստանի Հանրապետություն – ԳԷՀ համագործակցությանը, ինչի արդյունքում էականորեն բարելավվել է բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը, ստեղծվել են նոր բնության հատուկ պահպանվող տարածքներ, առաջընթաց է գրանցվել էներգախնայողության, կլիմայի փոփոխության, գյուղատնտեսության, կարողությունների զարգացման, վտանգավոր թափոնների կառավարման ուղղությամբ իրականացված գործողություններում: ԳԷՀ ֆինանսական աջակցությամբ Հայաստանում իրականացվող և նախատեսվող ծրագրերը նպատակաուղղված են կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը, բուսական և կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության պայմանների բարելավմանն ու հողերի դեգրադացիայի կանխարգելման ու կայուն հողօգտագործման ինտեգրմանը, կայուն օրգանական աղտոտիչների կառավարման, միջազգային ջրեր՝ գետավազանների համապարփակ կառավարմանը, օզոնային շերտի քայքայման նվազեցմանը և այլն:

✓ ԳԷՀ միջոցների բաշխմանը (ԳԵՀ-8), ինչի շրջանակներում հատկացումները ուղղված են կլիմայի փոփոխությանը, անապատացման դեմ պայքարին, կենսաբազմազանության պահպանությանը և Փոքր դրամաշնորհների ծրագրին (ԳԷՀ-ի Փոքր դրամաշնորհների ծրագիրն աջակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպության գործունեությանը՝ ուղղված կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության, հողերի դեգրադացիայի, միջազգային ջրերի և քիմիական նյութերի և թափոնների հիմնական ոլորտներում բնապահպանական մարտահրավերներին): Անդրադարձել ենք նաև ԳԷՀ-ի հավատարմագրված գործակալությունների հետ համատեղ իրականացվող ծրագրային հայեցակարգերի նախագծերին:

- Կոսովոյի շրջակա միջավայրի, տարածքային պլանավորման և ենթակառուցվածքների նախարար Լիբուրն Ալիուին հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է ոլորտի վերաբերյալ հարցերի լայն շրջանակ: Ներկայացրել եմ շրջակա միջավայրի խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ կառավարութան կողմից իրականացվող ծրագրերը, խոսել ոլորտում մեկնարկած օրենսդրական բարեփոխումների մասին: Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել մասնավորապես կլիմայական օրակարգի, պահպանվող տարածքների, անտառների, Սևանա լճի, պահպանության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման հեռանկարներից: Անդրադարձ է կատարվել

նաև վտանգավոր նյութերի և թափոնների արդյունավետ կառավարման և կենսաբազմազանության պահպանության հարցերին: Եվս մեկ անգամ ընդգծել եմ շրջակա միջավայրի կառավարման գործում միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցության կարևորությունը:

- ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) ծրագրերի կառավարիչ Էրսին Էսենին և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) ներկայացուցիչներին: Հանդիպման ընթացքում UNEP կառավարչի հետ քննարկել եմ «Հայաստանում հողերի վերականգնում և էկոհամակարգային ծառայությունների բարելավում պտղատու և ընկուզավոր ծառատեսակների կենսաբազմազանության օգտագործման միջոցով» ծրագրի ընթացքը, որը հաջողությամբ ներկայացվել է ԳԷՀ-ի քարտուղարության վերջնական հաստատմանը: Նշել եմ նաև, որ Հայաստանի Հանրապետությունը սահմանել է էներգիայի ընդհանուր սպառման մեջ արևային էներգիայի մասնաբաժինը մեծացնելու հավակնոտ նպատակ՝ մինչև 2025 թվականը հասնելու բնակչության կողմից սպառվող էներգիայի 26 տոկոսը վերականգնվող աղբյուրներից արտադրմանը: UNIDO ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնել աջակցել Հայաստանին՝ արդյունաբերության մեջ էներգաարդյունավետության գործելակարգերի և վերականգնվող էներգիայի հետ կապված հարցերում, հատկապես ՓՄՁ-ների կողմից, դրանց մրցունակությունը խթանելու և օրգանական հանածո վառելիքից կախվածությունը կրճատելու համար, քանի որ ջերմոցային գազերի արտանետումների ամենամեծ աղբյուրներից մեկը արդյունաբերությունն է:
- Կարճ հանդիպումներ են եղել նաև այլ գործընկերների հետ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ԳԷՀ-ի յոթերորդ ասամբլեան հավանություն տվեց Կենսաբազմազանության գլոբալ շրջանակային հիմնադրամի ստեղծման վերաբերյալ ԳԷՀ խորհրդի որոշմանը: Հիմնադրամի նպատակն է մոբիլիզացնել և արագացնել ներդրումները հանուն էկոհամակարգերի պահպանության և կայունության, որոնք վտանգված են անտառային հրդեհների, ջրհեղեղների, անոմալ եղանակային պայմանների և մարդկային գործունեության արդյունքում:

Կենսաբազմազանության գլոբալ շրջանակային հիմնադրամն արդեն ունի նախնական ներդրումներ՝ 200 միլիոն ԱՄՆ դոլար Կանադայից և 10 միլիոն ֆունտ ստերլինգ Միացյալ Թագավորությունից:

Եզրափակիչ լիագումար նիստի ընթացքում մասնակիցներն ամփոփել են բոլոր առաջարկությունները: Մասնակիցները պատրաստակամություն են հայտնել ամրապնդելու համագործակցությունը շահագրգիռ կողմերի միջև, ինչպես նաև փոխանակել իրենց գիտելիքները, ուժը, փորձը և ռեսուրսները՝ բարդ մարտահրավերներին դիմակայելու և ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար: Եվս մեկ անգամ ընդգծվել է միջսերունդների

համագործակցության, կանանց առաջնորդության կարևորությունը բնապահպանական գործողություններում:

9/1/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Հակոբ Սիմիդյան
31.08.2023թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը _ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը _ՀՀ վարչապետի 17.08.2023թ N 846–Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը _Հակոբ Սիմիդյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը. Կանադա (Վանկուվեր)
5. Գործուղման ժամկետները. 2023 թվականի օգոստոսի 21-28-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
_ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	*Անուն, ազգանուն 2*	*Անուն, ազգանուն 3*	*Անուն, ազգանուն ...*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					

	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Արկադի Խաչատրյան